ԶԼՄ-ՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ՝ ՀԱՐԱՎ-ԿՈՎԿԱՍՅԱՆ 10-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ.

Անդրադարձ ԶԼՄ-ների ազատության ոլորտում ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին

Թբիլիսի, Վրաստան
11-12 նոյեմբերի, 2013 թ.

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ 10-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ

ԶԼՄ-ների հարցերին նվիրված՝ Հարավ-Կովկասյան 10-րդ համաժողովը, որը կազմակերպվել էր ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցչի գրասենյակի կողմից՝ ԵԱՀԿ Բաքվի գրասենյակի և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի հետ համագործակցությամբ, տեղի ունեցավ 2013 թ. նոյեմբերի 11-ից 12-ը Թբիլիսիում:

2-օրյա միջոցառմանը ներկա էին ավելի քան 80 մասնակիցներ, այդ թվում՝ լրագրողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, պաշտոնատար անձինք, պատգամավորներ և գիտաշխատողներ Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից ու մամուլի միջազգային փորձագետներ:

Այս կարևոր ամենամյա միջոցառումը անցկացվում է Թբիլիսիում 2004 թ. ի վեր: Տարիների ընթացքում համաժողովներն անդրադարձել են լրատվամիջոցների ազատության համար կարևոր նշանակություն ունեցող տարբեր թեմաների, այդ թվում՝ «Տեղեկատվության ազատության միջազգային չափանիշներ»,«Բազմակարծություն և ինտերնետի կառավարում», «Տեղեկատվության մատչելիություն և նոր տեխնոլոգիաներ», «Լրագրողական կրթություն» և այլն:

10-ամյակին նվիրված համաժողովի ուշադրության կենտրոնում էր հետադարձ հայացքը լրատվամիջոցների ազատության մասով ԵԱՀԿ պարտավորություններին և տարածաշրջանում դրանց իրականացմանը:

Համաժողովի մասնակիցները նաև անդրադարձան տարածաշրջանում լրատվամիջոցների ազատության հետ կապված առավել արդիական որոշ հարցերի, ինչպիսիք են, օրինակ՝ լրագրողների անվտանգությունը, ինտերնետի ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը և հանրային հեռարձակողների ու կանոնակարգողների անկախությունը: Համաժողովի մասնակիցները նաև ուսումնասիրեցին թվային անցման և լրատվամիջոցների ինքնակարգավորման հետ կապված միջազգային չափանիշներն ու ազգային գործելակարգերը՝ համապատասխանաբար վարպետության դասի և կլոր սեղանի ժամանակ:

Համաժողովի մասնակիցները՝

1. Ողջունում են այն փաստը, որ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի իշխանությունները, լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ու գիտաշխատողները մասնակցում են համաժողովին և համագործակցության ոգով քննարկում են լրատվամիջոցների ազատության հետ կապված կարևոր խնդիրներ:

2. Դատապարտում են լրագրողների ու ԶԼՄ այլ ներկայացուցիչների նկատմամբ հարձակումները, ոտնձգություններն ու սպառնալիքները և դիմում են իշխանություններին հրապարակավ դատապարտել բռնության յուրաքանչյուր դեպք ու ապահովել արագ և արդյունավետ քննություն՝ կանխելու վախի և անպատժելիության մթնոլորտի խթանումը:

3. Կոչ են անում կառավարություններին բարելավել ազգային օրենսդրությունը և դրանք համահունչ դարձնել ԵԱՀԿ պարտավորություններին ու զերծ մնալ լրագրողական գործունեությունը քրեականացնելուց, այդ թվում՝ լրագրողներին ազատազրկելուց:

4. Կոչ են անում կառավարություններին զերծ մնալ լրատվամիջոցներով ու համակարգչային համակարգերի միջոցով հակասեմիտիզմի, այլատյացության և ռասիզմի քարոզչության ցանկացած դրսևորումից, ինչպես նաև զերծ մնալ լրատվամիջոցների ազատությունը սահմանափակող ծայրահեղական օրենքների ներդրումից:

5. Հորդորում են իշխանություններին ապահովել, որպեսզի լրագրողները, ինչպես նաև բլոգերներն ու լրագրության մեջ ներգրավված այլ անձինք կարողանան իրականացնել իրենց գործունեությունը անվտանգ միջավայրում՝ գիտակցելով, որ խոսքի ազատությունը տարածվում է առցանց և ոչ առցանց լրատվության վրա:

6. Ընդգծում են տեղեկատվության մատչելիության իրավունքի կարևորությունը և կոչ են անում կառավարություններին խթանել տեղեկատվության լայն տարածումը:

7. Օժանդակում են ինտերնետը՝ որպես խոսքի ազատության և արտահայտվելու բաց ու հրապարակային ֆորում լինելու գաղափարին և խորհուրդ են տալիս, որպեսզի իշխանությունները զերծ մնան առցանց բովանդակության սահմանափակողական կարգավորումից:

8. Ընդգծում են հանրային հեռարձակողների անաչառությունը, քաղաքական, խմբագրական և ֆինանսական անկախությունը երաշխավորող իրավական և կարգավորիչ միջավայր ստեղծելու ու պահպանելու ուղղությամբ իշխանությունների պարտականությունը:

9. Կոչ են անում կառավարություններին թվային հեռարձակման անցնելու ժամանակ բնակչության համար ապահովել տեղեկատվական բազմաթիվ աղբյուրներ՝ հաշվի առնելով ոչ պետական ու մարզային ռադիո և հեռուստաընկերությունների շահերը, գործնական քայլեր ձեռնարկել մեծացնելու բովանդակության բազմակարծությունը ու կանխել սեփականության կենտրոնացումը հեռարձակող ընկերություններում:

10. Կարևորում են ինքնակարգավորման արդյունավետ ինստիտուտների, ինչպես օրինակ՝ մամուլի խորհուրդների կարևորությունը, որոնք պետք է աշխատեն խորհրդակցական և ներառական եղանակով՝ առանց պետական միջամտության:

11. Շեշտում են Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից Մամուլի հարցերով Հարավ-Կովկասյան համաժողովների, վարպետության դասերի, կլոր սեղանների ու ուսուցումների կազմակերպումը շարունակելու կարևորությունը և առաջարկում են հետագա քայլեր ձեռնարկել՝ այդ միջոցառումների ժամանակ արված առաջարկությունների արդյունավետությունը գնահատելու հստակ մեխանիզմներ ապահովելու համար՝ մամուլի ազատության վրա դրանց ազդեցությունը ավելի մեծացնելու նպատակով:

11 նոյեմբերի 2013 թ.